№ 52 Մարտի 28 (Ապրիլի 9) 1880 Մարտի 28 (Ապրիլի 9) № 52

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

—

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Խացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշտութեան պայման։—Ներքին տեսութիւն, Մի գնութեան հիմք։ Նամակ Ախալցխայից, Նամակ Երևանից։ Նամակ Ախալքալաքից, Նամակ Պալանից։ Նամակ Իգդիրից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Յունաստան։ Իչխան Թիմարկի կարծիքները։—«Մշակի» հեռագրեր։—Յայտարարութիւններ։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ

—

Մեծահոգութիւնը նորան է յատուկ, ով գնահատում է մարդի արժանաւորութիւնները անկախ և անպայման կերպով, ով պատուում է իր նմանին ոչ այն պատճառով, որ նա մարդասէր է, այլ համոզված որ առանց փոխադարձ մտերմութեան չէ կարող ծնվել առաքինութիւն և կայանալ բարի գործ։

Կարո՞ղ է արդեօք այսպիսի վեհ և ազատ զգացմունք տեղի ունենալ այն ազգի մէջ, որի անհատները իւրաքանչիւր քայլ չափում են և փոխում միայն կօպէկի հաշով, բարևում են և յարգում միմեանց միայն շահի համար, խոնարհվում են և ստորանում միայն նիւթական ակնկալութիւնից, ծիծաղում են և տխրում միայն կեղծ հաճոյակատարութիւնից։ Կարո՞ղ է լինել արդեօք այսպիսի մարդիկների մէջ ներողամտութեան սկզբունք, սրտակցութեան պահանջ և մարդասիրութեան հոգի—թո՛ղ ասէ, ով ճանաչում է հայերին.... Եթէ մեզ հարցնեն ո՞ւնեն արդեօք լուսաւորչական հայերը հէնց մի կաթիլ իրաւունք յանդիմանելու իրանց բողոքական և կաթոլիկ արիւնակիցներին այն խորթութեան, սառնահոգութեան և զզուանքի համար, որով վերաբերվել են նոքա մինչև վերջին ժամանակ դէպի լուսաւորչադաւան հայերը։ Այն ժամանակ մենք կասենք, ունեցել ենք արդեօք հէնց մի հատիկ ցորենի չափ ներողամտութիւն և եղբայրական զգացմունք դէպի մեր հարազատները, որոնց մեղքը մեր առաջ եղել է միայն այն, որ նոքա կամեցել են ունենալ ազատ խղճմտանք, սեփական կրօնական համոզմունք։

Ամենադառն պայմաններից ըստիպված լինելով կորել կրօնական կապերը մեզ հետ, մեր այլադաւան եղբայրները, լինելով թւով սակաւամանրութիւն, դրութեամբ ընկճված, ուժով թոյլ, լեզուները կարճ՞ ի՞նչեր չեն փորձել մեր ձեռքից, ի՞նչ հարստահարութիւններ չեն կրել չարաբաղձները մեր անողոք վրէժխնդրութիւնից։ Հերիք է ասել որ հայկական ազգի մի փոքրագոյն մասը զանազան նիւթական կախումներ և հասարակական ակնկալութիւններ է ունեցել այդ ազգի մեծագոյն մասից՝ լուսաւորչադաւաններից, որը բաւական լինի արտայայտել ամեն տեսակ տմարդի վարմունք և անողորմ զրկանք, որ ընդունակ է հասցնել ուժով հայը իր թոյլ եղբորը։ Պատմական իրողութիւններ և ապացոյցներ մէջ բերելը շատ տխուր զգացմունքներ կարող էր յարուցանել մեզնից իւրաքանչիւրի մէջ, վասնորոյ, եթէ չենք ուզում դրօշմել մեզ ամենավատ անուններով, լաւ է որ հինը էլ չը մոտաբերենք և անցեալը բնաւ չը յիշենք... Բայց երբ ամբողջ մի քանի սերունդ կրել է իր սրտի վրա մեր հասցրած վէրքերը և ժառանգական կերպով խոցոտել իր յետնորդի սիրտը, կարելի է արդեօք զարմանալ, որ ազգային ճրագնաժամի մէջ մեր արիւնակիցները չեն վերաբերվում դէպի ընդհանուր ազգային շահերը այն տաք եռանդով, որը մենք պահանջում ենք նոցանից։

Նախ՝ մենք ինքներս, լուսաւորչադաւաններս, համարելով մեզ, իբր թէ, իսկական, հարազատ հայեր, տեսնում ենք մեր մէջ ազգութեան վերաբերմամբ անտարբերների այնպիսի մի մեծ լեգէոն, որ սարսափ և զարհուրանք է բերում մեզ վրա։ Երկրորդ՝ բացի դուր հալածանք, անարդար ատելութիւն և անողոք թշնամութիւն, սիրոյ մի նշոյլ անգամ չը ցոյց տալով դէպի մեր կրօնաբաժան եղբայրները, ի՞նչ իրաւունքով և ի՞նչ երեսով պահանջենք այժմ նոցանից ջերմ ըզգացմունք և համակրութիւն դէպի այն ազգի շահերը, որի մեծամասնութիւնը, սիրոյ տեղ փոքրամասնութեան միայն լեղի և դառնութիւն է տուել....Ո՛չ, եթէ մեր կաթոլիկ և բողոքական եղբայրները մեզանից աւելի ազնիւ են, այնչափ չարիք կրելուց յետոյ, նոքա էլ չեն կարող առաջին քայլը դէպի մեզ դարձեալ իրանք անել, այլ ազգային հարցի մէջ միանալու համար միանգամայն իրաւունք ունեն ասել մեզ. «եթէ ուզում էք հաշտվել մեզ հետ ազգային հողի վրա՝ համեցէք, միայն դիմաւորելու առաջին քայլը դուք արեցէք, առաջին ջերմ և անկեղծ խօսքը դուք ասեցէք մեր կոտրած սիրտը սփոփելու համար. կրօնի, պասի և ծոմի հարցը մի կողմ դրած, բաց երեսով առաջին եղբայրական բարևը դուք տուէք մեզ, մեր ցաւը խմանալու համար մեր շէմքից առաջ դուք ոտ դրէք, դուք աղաչեցէք, դուք ապաշաւեցէք ձեր կատարած խստութիւնների համար,—և այն ժամանակ կը տեսնէք որ ամեն ընդհանուր ազգային բանի մէջ մենք ձեզնից ոչնչով պակաս հայեր չենք...»

«Մշակը» միշտ քարոզել է կրօնաբաժան հայերի հաշտութեան գաղափարը, վասն որոյ եթէ ուզում ենք հաշտվել, այս է հաշտութեան առաջին պայմանը։

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՄԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔ

—

Եթէ եւրոպական քաղաքակրթութիւնը սաւգծել է այնպիսի հիմնարկութիւններ, որոնց սկզբունքը ու նպատակն է ամբողջապէս ծառայել հասարակական օգտին,—այդ հիմնարկութիւններից մէկը լրագիրն է։ Լրագիրը զարգացած հասարակական կեանքի ծնունդ ու պահանջ է. նա կեանք է ստանում միայն այն ժողովրդի մէջ, որի վրա ծագել է արդէն լուսաւորութեան ճառագայթը։ Լրագիրը հասարակական շահերի անկողմնապահ ներկայացուցիչն է. նրա խօսքը—հասարակութեան ձայնն է։ Նա քննում է հասարակական կեանքի երևոյթները, լոյս է թափում նրա խաւար կողմերի վրա, ցոյց է տալիս նորա վէրքերը, առաջարկում է բուժիչ միջոցներ, յարգում է լաւը, հարուածում վատը,—և այս բոլորը նա կատարում է յանուն հասարակական բարօրութեան։ Լրագրութիւնը ամենաուղղակի չափն է, որով կարելի է դատել մի որ և է ազգի մտաւոր զարգացման աստիճանի վրա։ Եթէ այդ չափով չափելու լինենք հայ հասարակութեան մտաւոր գրութիւնը, անկարելի բաւական մխիթարիչ եզրակացութեան պէտք է հասնենք։ Կէս դար է ընդամէնը որ լուսաւորութիւնը մուտք է գործել մեր ասիական կոպիտ կեանքի մէջ, և մենք արդէն ունենք լրագրների և ամսագրների համեմատաբար բաւական մեծ քանակութիւն. մենք իրաւունք ունենք ուրեմն կարծելու, որ մեր հասարակական կեանքը բաւական զարգացած է, զարգացած է այն աստիճան, որ պահանջ է զգում իր շահերի օրգաններ ունենալու։ Այդպէս կարելի է կարծել, եթէ բաւականանալ միայն թեթև հայացքով, բայց եթէ հարցը աւելի խոր քննելու լինենք, անշուշտ մոլորութիւն պէտք է անուանենք վերևը դուրս բերած եզրակացութիւնը։ Միայն թեթևամիտ օպտիմիստը կարող է հայ հասարակութիւնը լուսաւորուած անուանել, միայն կոյր և ծայրայեղ ազգասէրը կարող է մխիթարել իրան երևակայական ցնորքներով։ Հայ հասարակութիւնը դեռ չէ ըմբռնել ճշմարիտ քաղաքակրթութեան միտքը. լուսաւորութեան սկզբունքները դեռ չեն մտել նրա մարմնի և արեան մէջ։ Թէ նրա մտաւոր և հոգեկան կեանքի մէջ, թէ նրա աշխարհայեացքեան և ձգտումների մէջ թագաւորում է նոյն գանգաղութիւնը, նոյն աւանդական կոպտութիւնը։ Լրագիրներ, շաբաթաթերթեր, ամսագրեր,—նրանք ոչինչ չեն նշանակում—նրանք մեր հասարակական կեանքի ծնունդ չեն, մեր մտաւոր կեանքի պահանջ չեն, նրանք բուսել են և աճում են ոչ թէ բնականապէս, այլ արուեստական կերպով։ Հայ հասարակութիւնը դեռ չէ ըմբռնել պարբերական հրատարակութիւնների անհրաժեշտութեան միտքը։ Նրա համար մի և նոյն է՝ կը լինեն հայ լրագիրներ թէ չէ։ Թող դադարեն մեր լրագրները, և հայ հասարակութիւնը ոչ մի շոշափելի կորուստ չի զգայ. նա չի ցաւի, չի ողբայ, որովհետև նայում է լրագրութեան վրա ինչպէս մի օտար, խորթ հիմնարկութեան վրա, որովհետև նրա արեան մէջ դեռ չէ արմատացել այն համոզմունքը, որ լրագրութիւնը հասարակական շահերի պաշտպան է, հասարակական կեանքի և կարծիքի ներկայացուցիչ է։

Պահպանել մի հասարակական հիմնարկութիւն, որի հարկաւորութիւնը անմատչելի է հասարակութեանը,—դա մի դիւցազնական գործ է. մի անբնական ինքնազոհութիւն։ Լրագիրը մեր մէջ ինչպէս բղխում է մասնաւոր ինիցիատիվից, նոյնպէս պահպանում է իր գոյութիւնը մասնաւոր ոյժերով։ Հասարակութիւնը պարտական չէ համարում իրան գնել նիւթապէս նպաստել նրա զարգացմանը, որովհետև չէ կարողանում հաշուել այն մարի հետ, որ լրագիր հրատարակողը ամբողջապէս նուիրում է իր գործունէութիւնը նոյն իսկ հասարակութեան օգտին։ Նա կարծում է թէ լրագիր հրատարակելը մի մասնաւոր պարապմունք է, ապրուստի մի միջոց է, մի արհեստ է, զուցէ և բաւական շահաւէտ։ Հայ հասարակութիւնը անընդունակ է մասնաւոր ինիցիատիվից առաջացած գործի մէջ հասարակական բնաւորութիւն տեսնել։ Գցեցէք մի հայացք մեր լրագրութեան պատմութեան